

Մեզ հաղորդում են Վենետիկից, որ այնտեղ ամսիս 6-ին և 7-ին (19 և 20 ն. տ.) մեծ հանդէսով կատարվել է համազգային մեծ յօրելեանի տօնախմբութիւնը:

Ինչպէս յայտնի է, հայ գրերի գիւտի 1500-ամեակի մասամբ առաջին ուշագրաւ տեղն է Օշականը, ուր հանդչում են մեծ գոշի՝ ս. Մեսրոպի նշխարները: Սակայն ինչ վերաբերում է տպագրութեան 400-ամեակին, անկասկած առաջին ուշագրաւ տեղն է Վենետիկ քաղաքը Իտալիայում, ուր 1512—13 թ. առաջին անգամ ճանչեց անգրանիկ հայ մամուլը, լոյս ընծայելով հայատառ տպագրութեամբ ազգային առաջին երախայրիքը՝ «Պարզատումար», «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Տաղարան» և «Աղթարք» գրքոյկները:

Ուրիմն, այնտեղ, հեռաւոր Վենետիկում, մեր անգրանիկ տպագրական գործունէութեան որրանում, ազգային վերածնութեան և մտաւոր զարգացման համար նշանակալից դարձած ս. Ղազար կղզում և վանքում, կրկնակ յօրելեանները տօնվել են պատշաճ հանդիսաւորութեամբ, հետևեալ ծրագրով.

Հոկտ. 6 (19) կիրակի. — Առ. ժ. 9¹/₂-ին, սկսվել է հայրապետական սխառարագ, հայկական ծէսով և արարողութեամբ: Պատարագիչն է եղել Իգնատիոս կիւրեղեան արքեպիսկոպոսը, որ ընդհանրական արքան է Մխիթարեանների:

Նրեկոյեան ժ. 5-ին տեղի է ունեցել ժամերգութիւն, ապա հսկումն և օրհնութիւն:

Հոկտ. (7 20) երկուշաբթի. — Ս. Ղազարի

տօնի առիթով, որին նուիրված է Մխիթարեանների վանքի եկեղեցին, պատարագը մատուցել է, ժ. 8¹/₂-ին, յատուկ հրաւիրված՝ վենետիկի պատրիարք ծիրանաւոր Արիատիդէս կալալարի:

Նոյն օրը, առ. ժ. 10-ին, կայացել է գրական-երաժշտական ցերեկոյթ: Հանդիսականները զնացել են տեսնելու հին ձեռագիր և տպագիր յիշատակարանները, որոնք խնամքով պահված են Մխիթարեանների վանքի մատենադարանում և տպարանում:

Ցերեկվայ ժ. 2-ին տեղի է ունեցել հանդիսաւոր ճաշկերոյթ, որին ներկայ են եղել բոլոր միաբանութիւնը, բաղձաթիւ հրաւիրեալներ և պատուաւոր հիւրեր:
